

- պղպղուն եւ մեծածախ. ունէր ընդ իւր բա-
 դում ճորտ եւ ծառայ, սիրահիք եւ ենկիչա-
 110 րիք որպէս փառայ մի. եւ իբրեւ մերձեցաւ
 նա՝ իջաւ ի ձիոյն եւ անկաւ յօտս կաթողի-
 կոսին, ողջունեաց զնա: Եւ իբրեւ նստաւ
 եպիսկոպոսօք, վարդապետօք եւ քահանայիւք
 եւ բազմամբոխ ժողովրդօք, որք եկեալ
 115 երանի տային աչացն եւ զաջն համբուրէին.
 եւ անտի դարձեալ առ ուխտաւորս եւ առ
 ծանօթս, առ սիրելիս եւ բարեկամս, ունելով
 ընդ ինքեանս բախի, գինի, կերակուր եւ
 այլն. եւ ուրախացեալ ընդ զալուստ նոցա
 120 զրկախառն համբուրէին զմիմիանս եւ նըս-
 տեալ ի ճաշ զուարճանային: Եւ ոչ ոք մնաց,
 որ ծանօթ չունաց կամ սիրելի, բայց յի-
 նէն: Քանզի ոչ ոք կայր ինձ սիրելի, ո՛չ ծա-
 նօթ, ոչ ազգական. ո՛չ ես զոք ծանեայ, եւ ո՛չ
 125 ոք զիս. եւ մնացի ես միայն ի բացեայ եւ մե-
 կուսի, թափուր եւ ունայն. արտմեցաւ անձն
 իմ մինչեւ ի մահ, խոռվեցաւ ոգի իմ եւ ար-
 տասուս հարեալ հառաչեցի եւ ասեմ զողբս
 զայս³.

124 ծանեա: — 125 ի բացեա: — 126 յունայն: —
 127 յօգի: — 128 հառաչեցի:

³ Սիմէոն Հայրէններու նմանութեամբ, նաեւ ա-
 նոնց ազգեցութեան տակ երգած է ողբս. համեմատէ
 հետեւեալ քառեակները.

Յաշխարհս ես ի ժուռ եկայ
 չգրտայ բղորդ բարեկամ.
 Զիսելքս ի վրաս բերի
 զբազուկս արի սիրելի...: